

«Կուսակալն ազգ. վարժարանիս աշակերտներէն քսանեւիինգ հոգի քանտարկեց»:

Ինչո՞ւ համար այս քանտարկութիւնները:

Վասնզի քանիմ' օր առաջ կուսակալին *քօնաքին*¹ առջեւը հայու դիակ մը գտնուած է, եւ երկրորդ գիշերն կուսակալին *քօնաքը*² քարկոծուած է:

Ապա ուրեմն քարկոծողներն քանտարկեալներն են:

Քննութիւն եղա՞ծ է:

Բնաւ երբեք. քանի որ կուսակալին *քօնաքը*³ քարկոծուած է՝ յայտնի է որ Հայերը յանցաւոր են:

Այս խնդիրն Բ. Դրան եւ Պատրիարքարանի մէջտեղ քանակցութեան նիւթ եղած է. տեսնենք վերջը ո՛ր պիտի երթայ....:

17 Նոյեմբեր

Բարեբախտաբար քանտարկութեան լուր չեկաւ այսօր Սեբաստիայէն:

Ես կկարծեմ, թէ կուսակալն Սեբաստիոյ բոլոր Հայերն քանտարկած է եւ, հետեւապէս, դուրսը մարդ չէ մնացած, որ անոնց քանտարկուիլն հեռագրով իմացունեն մեզ:

Տաճկաստանի մէջ բա՛նտ... Բանտի մէջ բանտ...

18 Նոյեմբեր

Ի՞նչ եղաւ Հայկական խնդիրը:

Բան մ'ալ եղած չէ. նոյն վիճակին մէջ է՝ ուր որ էր երկու ամիս առաջ:

Տուլչինիօն Սեւ լերան յանձնուեցաւ երկու օր առաջ: Յունաստան ալ իւր գործը լմնցնելու է, որ կարգը մեր խնդրոյն գայ:

Անգղիոյ կառավարութիւնն այժմ ուրիշ խնդիրներով զբաղած ըլլալով՝ հայկական խնդիրը քիչ մը մոռցած ըլլալ կթուի. սակայն անգղիասէր Հայերը կյուսան, թէ Անգղիոյ կառավարութիւնն վերստին

¹ Պէշիկթաշի ընկերութեան մէկ դահեկան ալ ես պարտական եղայ:

² Երկու դահեկան եղաւ:

³ ԵՐԵՔ եղաւ: